ԿԱՆԱՉ ՏԵՔՍՏԻԼ.
ԵՐԿՐԻ ՏԵՔՍՏԻԼ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

DOI: 10.52174/2579-2989_2024.4-43

Հիմնաբառեր. *տեքստիլ արդյունաբերություն, կանաչ տեքստիլ, կայուն տեքստիլ, միջազգային վարկանիշ, քլաստեր, էկոլոգիական խնդիրներ, կանաչ տեխնոլոգիա, ստանդարտ, կայունություն*

Երկրի տնտեսական աճի անհրաժեշտ պայմաններից է ուժեղ և կայուն տեքստիլ արդյունաբերության առկայությունը: Բայց, միաժամանակ, տեքստիլ արդյունաբերությունը բնապահպանական խնդիրների ակտիվ հարուցիչ է, իսկ դրանց արդյունավետ լուծման համար անհրաժեշտ է երկրների և միջազգային կազմակերպությունների համակարգված համագործակցություն: Այս առումով, տեքստիլ արդյունաբերության մեջ կանաչ տեխնոլոգիաների զարգացման համար, համագործակցության տեսակետից, առավել համակարգված ուղին համապատասխան քլաստերների ստեղծումն է՝ զարգացած երկրների, որոնք արդեն ակտիվորեն օգտագործում են կանաչ տեխնոլոգիաները, և այն երկրների միջև, որոնք ցանկանում են ներդնել նման տեխնոլոգիաներ: ՀՀ-ն չի կարող զարգացնել տեքստիլ արդյունաբերություն՝ անմասն մնալով համաշխարհային միտումներից, որոնցից առաջնայինը կանաչ տեխնոլոգիաների զարգացումն է: Հաշվի առնելով կայունության խնդիրների վերաբերյալ սպառողների տեղեկացվածության աճը՝ ակնկալվում է, որ կանաչ և կայուն տեքստիլ արտադրանքի պահանջարկը կավելանա, իսկ այն երկրները, որոնց տեքստիլ ոլորտը կընդունի կանաչ տեխնոլոգիաները, կունենան բարձր միջազգային վարկանիշ, որն էլ կնպաստի դրանց դրական միջազգային հեղինակության ձևավորմանը՝ բարձրացնելով սպառողների, գործընկերների և շուկայի այլ մասնակիցների վստահության մակարդակը:

Թերեզա ՇԱՀՐԻՄԱՆՅԱՆ

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոն

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը՝ «Պետական և մունիցիպալ կառավարում» մասնագիտությամբ, իսկ 2012 թ.՝ նույն մասնագիտության մագիստրատուրան և ստացել կառավարման մագիստրոսի աստիճան: 2012-2015 թթ. եղել է հակաճգնաժամային և զբոսաշրջության կառավարման ամբիոնի հայցորդ:

2013 թ.-ից աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում:

Հեղինակ է 4 գիտական հրապարակումների, այդ թվում՝ մեկ մենագրության համահեղինակ:

https://orcid.org/0000-0001-8888-045X

Վերջին տարիներին էկոլոգիական խնդիրների մեջ հատկապես ծանրակշիռ են տեքստիլի և հագուստի արդյունաբերության կողմից հարուցվածները, և տեքստիլ արդյունաբերությունն էկոլոգիապես ճանաչված է որպես աշխարհի ամենավնասակար ոլորտը: Այս ոլորտում ավանդական ձեռնարկություններն իրենց արտադրական գործունեության ընթացքում արտազատում են էկոլոգիապես վտանգավոր թափոններ, սպառում մեծ քանակությամբ բնական ռեսուրսներ և բավական քիմիական թափոններ թողնում շրջակա միջավայրում[1]: Տեքստիլ արդյունաբերության էկոլոգիական խնդիրները ծագում են հումքի ստեղծման արտադրական գործընթացներում, այնուհետև արտացոլվում պատրաստի արտադրանքի մեջ ու շարունակվում տեղափոխման և ուտիլացման գործընթացներում: Կանաչ տեխնոլոգիաների ներդրումը նվազեցնում է տեքստիլ արդյունաբերության բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա[2]: Այս առումով, այսօր ակնհայտ է էկոլոգիապես մաքուր տեքստիլ արտադրանքի անհրաժեշտությունը, որի հիմքում օրգանական և վերամշակված նյութերի օգտագործումն է:

Պայմանավորված այն հանգամանքով, որ օրեցօր ավելի շատ երկրներ և սպառողներ են կենտրոնանում ապրանքների կայունության, կանաչ տեխնոլոգիաների և որակի վրա, ակնկալվում է, որ կանաչ և կայուն տեքստիլ արտադրանքի պահանջարկը կավելանա[3]: Ընկերությունները, որոնք ընդունում են կանաչ տեխնոլոգիաները, կարող են ակնկալել, որ իրենց արտադրանքը կդառնա ավելի մրցունակ: Օրինակ՝ արտադրական գործընթացներում ոչ կանաչ տեխնոլոգիաներ կիրառելիս, ինչպիսիք են սպիտակեցումը և ներկումը, օգտագործվում են քիմիական նյութեր, որոնք թունավորում են էկոհամակարգը[4]:

Այժմ բնապահպանական գործվածքները փոխարինում են սովորական տեքստիլին, որը ներառում է տարբեր նորարարական գործընթացներ և տեխնոլոգիաներ, որոնք ուղղված են տեքստիլ արտադրության բնապահպանական խնդրի նվազեցմանը[5]: Կանաչ տեքստիլը ձգտում է ստեղծել ավելի պատասխանատու և կայուն արդյունաբերություն, որը հաշվի կառնի տեքստիլ արտադրության բնապահպանական և սոցիալական տեսանկյունները (աղյուսակ 1)[6]:

Կանաչ տեքստիլի հիմնական բաղադրիչներն են էկոլոգիապես կայուն նյութերը, էներգաարդյունավետ արտադրության տեխնոլոգիաները և մշակման ու ներկման կայուն մեթոդները: Ընդհանուր առմամբ, տեքստիլի արտադրության հետ կապված են չորս հիմնական բնապահպանական գործոններ՝ ջուր, էներգիա, աղտոտում և չվերականգնվող ռեսուրսների օգտագործում[7]:

Առկա իրավիճակում հնարավոր է նպաստել Հայաստանի տեքստիլ ոլորտի ՓՄՁ մրցունակության բարձրացմանը՝ կայուն գործելաոճի և գործարար վարքագծի խթանմամբ[8]: Տեքստիլ արդյունաբերության մեջ միջազգային վարկանիշը շատ կարևոր է, քանի որ դրանով է պայմանավորված ոլորտի գրավչությունը՝ ներդրումների տեսանկյունից:

Բնապահպանական խնդիրների ար-

[1] «Կանաչ» տեքստիլ Եվրոպայի կայուն տնտեսության համար, http://umba.am/pics/2022/02/Arm_Green_textile_Booklet.pdf , 15.01.2024

[2] "Green Technologies: Concepts, Methodologies, Tools, and Applications", под редакцией Information Resources Management Association, 2011, Hershey, New York, https://books.google.am/books?id=p16y9zuEJ5IC&printsec=frontcover&source=gbs_book_other_versions_r&redir_esc=y#v=onepage&q&f=false

[3] «Կանաչ» տեքստիլ Եվրոպայի կայուն տնտեսության համար, http://umba.am/pics/2022/02/Arm_Green_textile_Booklet.pdf , 15.01.2024

[4] Sustainable Development in Chemical Engineering Innovative Technologies · Wiley · Vincenzo Piemonte, Marcello De Falco, Angelo Basile. Год: 2013. ISBN:978-1-119-95352-4; https://books.google.am/books?id=Z58d9hM7oRwC&printsec=frontcover&source=gbs_atb&redir_esc=y#v=onepage&q&f=false

[5] Selin Hanife Eryuruk Greening of the Textile and Clothing Industry, FIBRES & TEXTILES in Eastern Europe 2012; 20, 6A(95): 22-27, https://www.researchgate.net/publication/279588274_Greening_of_the_Textile_and_Clothing_Industry

[6] Selin Hanife Eryuruk Greening of the Textile and Clothing Industry, FIBRES & TEXTILES in Eastern Europe 2012; 20, 6A(95): 22-27, https://www.researchgate.net/publication/279588274_Greening_of_the_Textile_and_Clothing_Industry

[7] «Կանաչ» տեքստիլ եվրոպայի կայուն տնտեսության համար, http://umba.am/pics/2022/02/Arm_Green_textile_Booklet.pdf, 15.01.2024

[8] Տես նույն տեղում:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Կանաչ տեքստիլի հիմնական տեսանկյունները[9]

Կայուն նյութերի օգտագործում	➢ Տեքստիլ մանրաթելերի արտադրություն վերամշակված կամ կենսաքայքայվող նյութերից, ինչպիսիք են օրգանական բամբակը, բամբուկը, տենցելը (Tencel (lyocell), որը պատրաստված է փայտից, սովորաբար՝ էվկալիպտից՝ օգտագործելով էկոլոգիապես մաքուր գործընթաց) և այլն:
Էներգաարդյունավետ տեխնոլոգիաներ	➢ Արտադրական այնպիսի գործընթացներ, որոնք նվազագույնի են հասցնում էներգիայի սպառումը, ինչպիսիք են վերականգնվող էներգիայի և ցածր արտանետումների տեխնոլոգիաների օգտագործումը (օրինակ՝ օրգանական բամբակի արտադրություն՝ առանց քիմիական պարարտանյութերի և թունաքիմիկատների օգտագործման):
Կայուն մշակման և ներկման մեթոդներ	➢ Ավանդական քիմիական ներկման գործընթացների փոխարինում ավելի անվտանգ, էկոլոգիապես մաքուր այլընտրանքներով: ➢ Ավանդական քիմիական նյութերի փոխարինում ավելի անվտանգ էկոլոգիապես մաքուր քիմիական նյութերով: ➢ Հավաստագրված էկոլոգիապես մաքուր քիմիական բաղադրիչների օգտագործում: Արագ աճող բուսանյութերի աճեցում, որը պահանջում է նվազագույն քիմիական ներդրում: ➢ Կենսաբազմազանությանն ու հողի առողջությանն աջակցություն:
Թափոնների վերականգնում և վերամշակում	➢ Թափոնների կառավարում, ներառյալ՝ վերաօգտագործումը, վերամշակումը և տեքստիլ նյութերի հեռացումը: ➢ Ներկման գործընթացներում օգտագործվող ջրի վերամշակում և վերաօգտագործում: ➢ Ջրի արդյունավետ օգտագործում մշակության ժամանակ՝ ջուր խնայող ներկման մեթոդներ: Ջրի փակ շրջանառության համակարգեր՝ ջրի սպառումը նվազեցնելու համար: ➢ Փակ արտադրական կենսափուլ՝ նվազագույնի հասցնելով ջրի և քիմիական թափոնների արտանետումները: Էներգիայի սպառման մշտադիտարկում և օպտիմալացում: ➢ Էներգաարդյունավետ արտադրության տեխնոլոգիաների՝ վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործում, արևային, քամու և հիդրոէներգետիկ լուծումների ինտեգրում: ➢ Ավանդական էներգիայի աղբյուրներից կախվածության նվազեցում՝ արտադրական գործընթացներում էներգախնայող սարքավորումների, բարձր արդյունավետության և էներգախնայող տեխնոլոգիաների կիրառմամբ: ➢ Տեքստիլ թափոնների հավաքման և վերամշակման համակարգերի ստեղծում: ➢ Տեքստիլ նյութերի վերամշակման և վերաօգտագործման նոր մեթոդների մշակման խթանում:
Տրանսպորտի և լոգիստիկայի էներգաարդյունավետություն	➢ Տրանսպորտային երթուղիների օպտիմալացում: ➢ Տեքստիլ ապրանքների փոխադրման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու համար օպտիմալացման համակարգերի ներդրում: ➢ Աջակցություն ցածր արտանետումներով տրանսպորտային միջոցների օգտագործմանը:
Հավաստագրում և ստանդարտացում	➢ Ստանալ հավաստագրեր, ինչպիսիք են GOTS (Գլոբալ օրգանական տեքստիլի ստանդարտ) կամ այլ բնապահպանական ստանդարտները, որոնք հաստատում են, որ արտադրանքը համապատասխանում է կայունության բարձր չափանիշներին:

[9] Selin Hanife Eryuruk Greening of the Textile and Clothing Industry, FIBRES & TEXTILES in Eastern Europe 2012; 20, 6A(95), 22-27.

դյունավետ լուծման համար անհրաժեշտ է երկրների և միջազգային կազմակերպությունների համակարգված համագործակցության ապահովում, և ՀՀ-ն չի կարող զարգացնել տեքստիլ արդյունաբերությունը՝ անմասն մնալով համաշխարհային միտումներից: Մարտահրավերների հաղթահարումը պահանջում է ոչ միայն ազգային, այլև միջազգային ջանքեր՝ ներառյալ կայուն զարգացմանը նպաստող ստանդարտների ու օրենսդրության մշակումը: Այստեղ կարևորը համագործակցությունն է՝ այս առումով լավագույն փորձ ունեցող երկրների (օրինակ՝ Պորտուգալիա, Շվեդիա, Գերմանիան, Դանիա, Հնդկաստան, Թուրքիա և Միացյալ Նահանգներ, որոնք առավել հաճախ ճանաչվում են որպես լավագույն, կայուն տեքստիլ արտադրողներ և մատակարարներ[10]) և առաջին քայլերն անող երկրների միջև: Իսկ վերոնշյալի բացակայությունը կարող է դանդաղեցնել կանաչ տեխնոլոգիաների ընդունումը համաշխարհային մակարդակով:

Համագործակցության տեսանկյունից, ՀՀ-ն, կարելի է ասել, արել է առաջին քայլերը՝ 2021 թվականի դեկտեմբերի 1-ին մեկնարկելով «Կանաչ տեքստիլ Եվրոպայի կայուն տնտեսության համար» ծրագիրը, որն իրականացվում է Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ու Լիտվայի հագուստի և տեքստիլ արդյունաբերության ընկերակցության կողմից: Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանի տեքստիլ ոլորտի ՓՄՁ մրցակցային կարողությունների հզորացմանը, բարելավել շուկաների հասանելիությունը, խթանել Հայաստանի, Լիտվայի, ինչպես նաև ԵՄ շուկայի տեքստիլ ոլորտի ՓՄՁ-ների միջև կապերը: Առաջին փուլում նախատեսված են անհրաժեշտ տեղեկատվության փոխանակում, հանդիպումներ ու գործարար կապերի ստեղծում, այնուհետև համագործակցություն: Թեև Լիտվայում ապրում է Եվրամիության բնակչության ընդամենը 0,5 տոկոսը, այդուհանդերձ, ԵՄ անդամ 28 երկրների շարքում տեքստիլի և հագուստի ոլորտում այն զբաղեցնում է 13-րդ տեղը: Ոլորտի շրջանառությունն այստեղ 941 միլիոն եվրո է, արտահանումը՝ 815 միլիոն եվրո: Այս առումով, լիտվացի գործարարների փորձը կարող է շահեկան լինել հայ գործընկերների համար՝ զարգացնելով տեղական ՓՄՁ կարողությունները: Հայկական և լիտվական ՓՄՁների միջև գործարար կապերը B2B ձևաչափով են: Գործընկեր երկրներում պարբերաբար կազմակերպվում են Հայաստանի և Լիտվայի թեթև արդյունաբերության ոլորտի արտադրանքի ցուցադրություններ, գործարար հանդիպումներ և աշխատաժողովներ: Այս այցերի շրջանակում կատարված աշխատանքի արդյունքում ակնկալվում է ունենալ կնքված հուշագրեր ու պայմանագրեր: Ձեռք բերված արդյունքները շարունակական դարձնելու նպատակով կստեղծվի Լիտվայի և Հայաստանի թեթև արդյունաբերության ոլորտի գործարարների էլեկտրոնային տեղեկատվական հարթակ, որը կօգնի համապատասխանեցնելու ներգրավված ընկերությունների առաջարկը և պահանջարկը[11]: Առկա իրավիճակում ա-

[10] Heather Williams, What Are The Best Countries for Sustainable Clothing Manufacturing, 17th July 2023, https://blog.sourcingplayground.com/what-are-the-best-countries-for-sustainable-clothing-manufacturing/?gclid=EAIaIQobChMIzszj-4D2gwMVj45oCR2vbgULEAAYASAAEgJ8TfD_BwE

[11] Համագործակցում են հայ և լիտվացի տեքստիլագործները, 13:12, 12.02.2022, https://www.lragir.am/2022/02/12/698180/, 15.01.2024

ռավել քան երբեք Հայաստանի տեքստիլ արդյունաբերության զարգացման վեկտորը պետք է ուղղել դեպի կայուն տեքստիլ արդյունաբերության ուղղվածություն, որն էլ հնարավոր կլինի ապահովել՝ այս տեսանկյունից զարգացած երկրների հետ համագործակցության եզրեր գտնելով: Նման համագործակցությունները կարող են դառնալ պատուհան դեպի ժամանակակից և մրցունակ տեքստիլի աշխարհ, որտեղ «խաղի կանոններն» ամբողջովին այլ են՝ միտված կանաչ տեքստիլի և տեքստիլ արդյունաբերության կայունության գնահատմանը: Այսպես կոչված, «խաղի կանոններն» էլ սահմանվում են հատուկ կազմակերպությունների կողմից՝ ստանդարտների միջոցով (օրինակ՝ Օրգանական տեքստիլի համաշխարհային ստանդարտը (GOTS), որի միջոցով սահմանվում են օրգանական տեքստիլ նյութերի էկոլոգիապես կայուն արտադրության պահանջները): Այն երկրները, որոնք ակտիվորեն կիրառում են GOTS ստանդարտը, կարող են ավելի բարձր կարգավիճակ ունենալ կանաչ տեքստիլի ոլորտում[12]: Կան կազմակերպություններ, օրինակ՝ Տեքստիլ բորսան, որն ապահովում է կայուն տեքստիլի սերտիֆիկացում և ստանդարտներ: Նրանց ստանդարտները, ինչպիսիք են Գլոբալ վերամշակված ստանդարտը (GRS) և Պատասխանատու բուրդ ստանդարտը (RWS), չափում են տեքստիլ արտադրանքի կայունության մակարդակը[13]: Fashion Revolution-ի Fashion Transparency Index ցուցանիշը չափում է կայունությունն ու թափանցիկությունը տեքստիլ արդյունաբերության մեջ: Այն երկրները, որոնք ակտիվորեն աշխատում են կայուն փորձի հիման վրա, կարող են ավելի բարձր տեղ զբաղեցնել այս վարկանշում[14]: Sustainable Apparel Coalition (SAC) կազմակերպությունը մշակել է Higg Index գործիքը՝ տեքստիլի և նորաձևության ոլորտներում կայունությունը չափելու համար: Higg ինդեքսն օգտագործող երկրները կարող են մասնակցել իրենց կայունության կատարողականի գնահատմանը և բարելավմանը[15]: Կանաչ տեքստիլի ստանդարտներին համապատասխանելն ընդգծում է շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու վարքագիծը և համաշխարհային պահանջներին համապատասխանությունը:

[12] Օրգանական տեքստիլի վկայագիր, https://www.dogal.com/hy/organik/organik-tekstil-sertifikasi/
[13] https://textileexchange.org/standards/, last access 23.01.2024.
[14] Fashion Transparency Index 2023, Jul 12, 2023 https://issuu.com/fashionrevolution/docs/fashion_transparency_index_2023_pages, last access 23.01.2024.
[15] Higg index tools, https://apparelcoalition.org/tools-programs/higg-index-tools/, last access 23.01.2024.

Ելնելով վերոնշյալից՝ կարելի վկայել, որ ՀՀ տեքստիլ արդյունաբերության հաջողության գրավականը միջազգային չափանիշներին համապատասխանության ապահովումն է: Այս առումով նույնպես, ՀՀ-ն առաջին քայլերը, կարծես, արել է. այժմ մեր երկրում գործում է կազմակերպություն, որը էկոլոգիական արտադրանքի շրջանակում մատուցում է էկոլոգիական տեքստիլ արտադրանքի փորձարկման ծառայություններ: Էկոլոգիական տեքստիլ արտադրանքի թեստերից բացի, կազմակերպությունը տրամադրում է նաև էկոլոգիական արտադրանքի չափման, փորձարկման, վերլուծության, գնահատման և սերտիֆիկացման այլ ծառայություններ[16]:

Ակնհայտ է, որ այլևս հնարավոր չէ խոսել զարգացած տեքստիլ արդյունաբերություն ունենալու մասին, եթե վերջինս չի համապատասխանում տեքստիլ արդյունաբերության կայունության հայեցակարգին: Պայմանավորված ժամանակի հրամայականով՝ շատ կարևոր է, որ ՀՀ տեքստիլը ևս զարգանա այնպես, որ դիրքավորվի կանաչ տեքստիլի երկրների վարկանիշների համակարգում: Առաջին հայացքից, նման նպատակը բավական հավակնոտ է՝ լի խոչընդոտներով, որոնք, սակայն, քայլ առ քայլ կարելի է հաղթահարել՝ կարգավորող միջոցառումների, կանոնակարգերի ներդրմամբ, ֆինանսական և տնտեսական մարտահրավերների հաղթահարմամբ: Օրենսդրական դաշտի առումով, առանց այն էլ սաղմնային փուլում գտնվող ոլորտը կարող է դժվարությունների առաջ կանգնել: Օրենսդրության փոփոխությունները ընկերությունների համար կարող են անորոշության միջավայր ստեղծել: Նոր պահանջներին մշտապես հարմարվելու անհրաժեշտությունը կարող է մարտահրավեր դառնալ բիզնեսի համար: Տարբեր երկրների և միջազգային կազմակերպությունների միջև ստանդարտների և պահանջների տարբերություններն էլ, հնարավոր է, դժվարացնեն գործելակերպի ներդաշնակեցումը: Համաշխարհային շուկա արտադրանք արտահանելիս ընկերությունները կարող են կանգնել դժվարության առջև՝ չհամապատասխանելով տարբեր կանոնակարգերի: Առաջնային այստեղ կարգավորողների և ընկերությունների բարելավված համակարգումն է, ինչը թույլ կտա նվազեցնել անորոշությունը:

ՀՀ կայուն տեքստիլ արդյունաբերության զարգացման գործում մեկնարկած համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ, համաձայնագրերի կնքումն ու փորձի փոխանակումը պետք է շարունակական բնույթ կրեն, ինչի շնորհիվ՝ կարծում ենք՝ տեքստիլ արդյունաբերության կանաչ տեխնոլոգիաների առաջընթացը կապահովվի՝ թույլ տալով արտադրության առավել արդյունավետ, մատչելի և նորարարական մեթոդների ներդրում:

Բազմաթիվ չափանիշներին և պահանջներին համապատասխանելու համար արտադրության արդիականացման և նոր կանաչ տեխնոլոգիաների ներդրման ծախսերը կարող են զգալի լինել: Նման ֆինանսական խոչընդոտները հնարավոր է մեղմել կառավարության աջակցությամբ, ինչպես նաև միջազգային ներդրումների ներգրավմամբ: Այժմ երկրների միջև առկա է կանաչ տեխնոլոգիաների ներգրավման ոլորտում ներդրումների անհավասար բաշխում, ինչն էլ կարող է մրցունակության անհավասարակշռություն առաջացնել: Որոշ երկրներ կարող են դժվարություններ ունենալ ներդրումներ ներգրավելու հարցում՝ իրենց տեքստիլ արդյունաբերության արդիականացման համար[17]: Այս առումով, ՀՀ-ն ևս ունի դժվա

[16] Էկոլոգիական տեքստիլ արտադրանք, https://www.ekolojik.com.tr/hy/ekolojik-urunler/ekolojik-tekstil-urunleri/, (24.01.2024թ.)
[17] Hethorn, J., & Ulasewicz, C. (2015). Sustainable Fashion: What's Next? 2nd ed. New York, NY: Bloomsbury Publishing, Inc. ISBN 9781628925319. 416 pp. (Paperback), https://doi.org/10.1111/fcsr.12266

ություն, և առկա է միջազգային համագործակցության անհրաժեշտություն, իսկ համագործակցության տեսանկյունից, առավել գրավիչ դառնալու, ներդրումներ ներգրավելու համար հատկապես հիմա հրատապ է կայուն գործելակերպի որդեգրումը: Առանց պետության մասնակցության՝ կանաչ տեքստիլի զարգացումը հնարավոր չէ: Հատկապես պետության կողմից կարևոր քայլ կարող է լինել աջակցությունն և խրախուսումը ֆերմերներին՝ օրգանական հումք աճեցնելու համար: Նաև պետք է արդիականացնել կրթությունն և ուսուցումը՝ կայունության տարրեր մտցնելով կրթական ծրագրերում, ընկերությունների համար կազմակերպել համապատասխան ուղղվածության ուսուցում և խորհրդատվություն՝ վերապատրաստելով ոլորտի աշխատողներին կանաչ և կայուն գործելակերպի հիմքով: Ինչպես վերը նշեցինք, այս ուղղությամբ անհրաժեշտ է գործընկերություն և համագործակցություն՝ ֆինանսական աջակցության, տեխնոլոգիաների փոխանցման, ենթակառուցվածքների արդիականացման, նորարարական կենտրոնների ստեղծման, ստանդարտների և կանոնակարգերի մշակման առումներով: Այս ամենը հնարավոր է ապահովել քլաստերների ձևավորմամբ:

Քլաստերների շրջանակում՝ կանաչ տեխնոլոգիաների ոլորտում փորձի և գիտելիքի փոխանակման նպատակով, զարգացած կանաչ տեքստիլ արդյունաբերություն ունեցող երկրները կարող են համագործակցել այս ուղղությամբ առաջին քայլերն անող շահագրգիռ երկրների հետ: Համագործակցությունը կարող է ներառել փորձագետների փոխանակման, համատեղ հետազոտական ծրագրերի իրականացման և մասնագետների վերապատրաստման գործողություններ, որոնց շնորհիվ՝ կարելի է ապահովել առաջադեմ կանաչ տեխնոլոգիաների հասանելիություն՝ համատեղ մշակելով տեխնոլոգիաների փոխանցման և իրականացման ծրագրեր: Հաջորդ կարևոր քայլը ֆինանսական աջակցության տրամադրումն է՝ հեշտացնելու կանաչ տեխնոլոգիաների ընդունումն այն երկրներում, որոնք դեռևս բավարար ռեսուրսներ չունեն կանաչ տեխնոլոգիաներն ինքնուրույն ներդնելու համար: Այսպիսով՝ քլաստերները կարող են լինել շատ արդյունավետ մոտեցում՝ փոխգործակցող երկրների բիզնեսի, ակադեմիական միջավայրի և պետական կառույցների ներկայացուցիչների մերձեցման առումով: Այս մոտեցումը կօգնի տեքստիլ արդյունաբերության զարգացման տարբեր մակարդակների երկրներին միասին աշխատել կայուն զարգացման խթանման և շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցման ընդհանուր նպատակի՝ կանաչ տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ:

Այսպիսով՝ միջազգային վարկանիշների բարձրացումը և կայունության ջանքերի ճանաչումը կարող են նոր հնարավորություններ բացել արտահանման և գործընկերության համար, ինչպես նաև կայուն տեքստիլ արդյունաբերության զարգացումը կարող է ներդրումներ ներգրավելու որոշիչ գործոն դառնալ: Կանաչ տեխնոլոգիաների հաջող ներդրումը գրավում է

կայուն նախագծերով հետաքրքրված ներդրողների ուշադրությունը և օտարերկրյա ներդրումների համար դառնում ձգողության կենտրոն: Հետևաբար՝ կանաչ տեխնոլոգիաների ընդունումը տեքստիլ արդյունաբերության մեջ երկրի համար կարող է ունենալ կարևոր ռազմավարական նշանակություն՝ համատեղելով տնտեսական աճի խթանումը, համաշխարհային շուկայում հեղինակության ամրապնդումն ու բնապահպանական օգուտները, ինչն էլ վերջնարդյունքում թույլ կտա մեր երկրին անմասն չմնալ բնության պահպանմանն ուղղված համաշխարհային միտումներից: Այն երկրները, որոնք ակտիվորեն կիրառում են կանաչ տեխնոլոգիաներ, համաշխարհային ասպարեզում դրական ընկալում են ձևավորում իրենց ապրանքանիշների մասին: Այսպիսով, ելնելով ՀՀ տեքստիլ արդյունաբերության մեջ կանաչ տեխնոլոգիաների կիրառության առկա մարտահրավերների բազմավեկտոր բնույթից, վերջիններիս հաղթահարումը պահանջում է հավասարակշռված և համակարգված մոտեցում, որը ներառում է կառավարության աջակցությունը, միջազգային համագործակցությունը, նորարարական լուծումներն արտադրության և սպառողների վարքագծի ոլորտում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Էկոլոգիական տեքստիլ արտադրանք, https://www.ekolojik.com.tr/hy/ekolojik-urunler/ekolojik-tekstil-urunleri/ (24.01.2024 թ.)
2. «Կանաչ» տեքստիլ Եվրոպայի կայուն տնտեսության համար, http://umba.am/pics/2022/02/Arm_Green_textile_Booklet.pdf, վերջին մուտք՝ 15.01.2024
3. Համագործակցում են հայ և լիտվացի տեքստիլագործները, 13:12 12.02.2022, https://www.lragir.am/2022/02/12/698180/, վերջին մուտք՝ 15.01.2024
4. Օրգանական տեքստիլ վկայագիր, https://www.dogal.com/hy/organik/organik-tekstil-sertifikasi/
5. https://textileexchange.org/standards/, վերջին մուտք՝ 15.01.2024
6. Altenburg T.,Assmann C.,Green Industrial Policy. Concept, Policies, Country Experiences,December 2017 Publisher: UN Environment and German Development Institute, https://www.greenpolicyplatform.org/sites/default/files/downloads/resource/Green%20Industrial%20Policy_Concept,%20Policies,%20Country%20Experiences.pdf
7. Bathelt, H. (2008). [Review of Clusters and Regional Development: Critical Reflections and Explorations, by B. Asheim, P. Cooke, & R. Martin]. Economic Geography, 84(1), 109–112. http://www.jstor.org/stable/30033160
8. Fashion Transparency Index 2023, Jul 12, 2023, https://issuu.com/fashionrevolution/docs/fashion_transparency_index_2023_pages, վերջին մուտք՝ 23.01.2024.
9. Gardetti, M.A., & Torres, A.L. (2013). Sustainability in Fashion and Textiles: Values, Design, Production and Consumption., https://www.semanticscholar.org/paper/Sustainability-in-Fashion-and-Textiles%3A-Values%2C-and-Gardetti-Torres/36e26c319f6175c69398cd-1b8e966676b3660b8d
10. «Green Technologies: Concepts, Methodologies, Tools, and Applications», edited by Information Resources Management Association, 2011, Hershey ,New York, https://books.google.am/books?id=p16y9zuE-J5IC&printsec=frontcover&source=gbs_book_other_versions_r&redir_esc=y#v=onepage&q&f=false
11. Heather Williams, What Are The Best Countries for Sustainable Clothing Manufacturing, 17th July 2023, https://blog.sourcingplayground.com/what-are-the-best-countries-for-sustainable-clothing-manufacturing/?gclid=EAIaIQobChMIzszj-4D2gwMVj45oCR2vbgULEAAYASAAEgJ8TfD_BwE
12. Hethorn, J., & Ulasewicz, C. (2015). Sustainable Fashion: What's Next? 2nd ed. New York, NY: Bloomsbury Publishing, Inc. ISBN 9781628925319. 416 pp. (Paperback), https://doi.org/10.1111/fcsr.12266
13. HIGG INDEX TOOLS, https://apparelcoalition.org/tools-programs/higg-index-tools/, վերջին մուտք՝ 23.01.2024.
14. Selin Hanife Eryuruk Greening of the Textile and Clothing Industry, FIBRES & TEXTILES in Eastern Europe 2012; 20, 6A(95): 22-27, https://www.researchgate.net/publication/279588274_Greening_of_the_Textile_and_Clothing_Industry
15. Sustainable Development in Chemical Engineering Innovative Technologies · Wiley · Vincenzo Piemonte, Marcello De Falco, Angelo Basile. Година: 2013. https://books.google.am/books?id=Z58d9hM7oRwC&printsec=frontcover&source=gbs_atb&redir_esc=y#v=onepage&q&f=false, ISBN:978-1-119-95352-4

Тереза ШАГРИМАНЯН
Администратор исследовательского центра «Амберд», АГЭУ

РЫНКИ И КОНКУРЕНЦИЯ

ЗЕЛЕНЫЙ ТЕКСТИЛЬ: ОСНОВЫ ПОВЫШЕНИЯ МЕЖДУНАРОДНОГО РЕЙТИНГА ТЕКСТИЛЬНОЙ ОТРАСЛИ СТРАНЫ

Одним из необходимых условий экономического роста страны является развитие сильной и стабильной текстильной промышленности. Но, в то же время, текстильная промышленность является активным источником экологических проблем, эффективное решение которых требует скоординированного сотрудничества стран и международных организаций. В связи с этим наиболее системным способом сотрудничества по развитию зеленых технологий в текстильной промышленности является создание соответствующих кластеров между развитыми странами, которые уже активно используют зеленые технологии, и теми странами, которые хотят внедрить такие технологии. РА не может развивать свою текстильную промышленность, не будучи частью этих глобальных тенденций, где развитие зеленых технологий имеет первостепенное значение. Принимая во внимание рост осведомленности потребителей о вопросах устойчивого развития, ожидается, что спрос на экологически чистую и экологически чистую текстильную продукцию увеличится, а те страны, чей текстильный сектор будет внедрять зеленые технологии, уже будут иметь высокую международную репутацию, что будет способствовать формированию положительной международной репутации страны, увеличению потребителей, доверию партнеров и других участников рынка.

Ключевые слова: *текстильная промышленность, зеленый текстиль, устойчивый текстиль, международный рейтинг, кластер, экологические проблемы, зеленые технологии, стандарт, устойчивость, Higg Index.*

Tereza SHAHRIMANYAN
Administrator of the «Amberd» Research Center, ASUE

MARKETS AND COMPETITION

GREEN TEXTILE: FOUNDATIONS FOR INCREASING THE INTERNATIONAL RANKING OF THE COUNTRY'S TEXTILE INDUSTRY

One of the essential prerequisites for the economic growth of the country is the development of a strong and stable textile industry. However, the textile industry is an active contributor to environmental problems, the effective solution of which requires a coordinated cooperation of countries and international organizations. In this regard, the most systematic way of cooperation for the development of green technologies in the textile industry involves creating appropriate clusters that connect developed countries, already actively using green technologies, with those aspiring to introduce such technologies. The RA cannot develop its textile industry without being part of these global trends, where the development of green technologies plays a vital role. Taking into account the growing consumer awareness of sustainability issues, the demand for green and sustainable textile products is expected to rise. Countries adopting green technologies in their textile sectors will enhance their international reputation, which will contribute to the formation of a positive international reputation of the country, increase in the number of consumers, trust of partners and other market participants.

Keywords: *textile industry, green textile, sustainable textile, international rating, cluster, ecological problems, green technology, standard, sustainability, Higg Index*